



## ԳԻՏԵՐՍ ՄԻՆԱԿԴ ԶԲԱՂԻԼ

Արձակուրդները շատ հաճելի են... Սակայն անոնք երբեմն մեզի երկար կրնան թուփլ: Այս հարցարանին պատասխանե գիտնալու համար, թե դուն ինչպե՛ս կրնաս անցընել արձակուրդդ:

1.- Երբ աչքերդ զոցես, երազած արձակուրդներիդ պիտի նմանեին...

\* Ընտանիքիդ հետ սքանչելի պտոյտի մը:

Օ Խոտին վրայ երկնցած հանդարտ յետմիջօրեի մը:

- Ամառնային դպրոցի մը՝ շրջապատուած ընկերներով եւ հաճելի ժամանակներ անցընելով:

2.- Առտուն կանուխ կ'արթննաս...  
Օ Ի՛նչ մեծ ուրախութիւն, արձակուրդի նոր օր մը:  
- Անմիջապէս կ'երթաս եղբայրդ կամ քոյրդ արթնցնելու՝ միասին խաղալու համար:

\* Պապա՛, մամա՛, այսօր ի՛նչ պիտի ընենք:

3.- Տան մէջ ամեն մարդ զբաղած է...

\* Կ'երթաս տեսնելու, թէ անոնք ի՛նչ կ'ընեն, որպէսզի գաղափար մը առնես:  
Օ Առիթն է կարդալու, ձեռնային աշխատանք մը ընելու կամ գծելու:

- Երանի բարեկամդ քովդ ըլլար...

4.- Ծովափին...

Օ Սքանչելի ժամանակ կ'անցընես աւազին հետ խաղալով:  
\* Ուրիշ մանուկի մը կը մօտենաս անոր հետ խաղալու համար:

- Ծով կ'երթաս մեծ տոպրակ մը լեցուն ծովու խաղալիքներով:

5.- Արձակուրդիդ ընթացքին ամենէն շատ կըրկնած նախադասութիւնդ...

- Կը ձանձրանամ:

Օ Շատ արագ անցաւ:

\* Ի՛նչ կրնամ ընել:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱՆ ԿԱՌԵԱՆ-ՏԻՔՈՒԲԵԱՆ  
ՆԿԱՐԱՉԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՅԵԱՆ



Մորթեցի մէկ կողմ դրի, բադ մի՛ ըսեր, այլ իսկական գոմէշ մը: Հադին շալկեց՝ չկրցաւ, Հիւդին շալկեց՝ չկրցաւ, Չատին չկրցաւ, է՛ս շալկեցի: Ըալկեցի ու քալեցինք:

Գացի՛նք, գացի՛նք, հասանք տեղ մը, մէկ ալ տեսնենք երեք գիւղ: Երկուքին տեղը չ՛ երեւիր, միւսին մէջ ալ տուն չկայ: Այս անտուն գիւղին մէջ հոս փնտռեցինք, հոն փնտռեցինք, գտանք տուն մը՝ մէջը երեք պառաւ, երկուքը՝ մեռած, միւսին բերանն ալ շունչ չկայ:

- Տղա՛ք,- ըսինք,- եկէք բաղով փիլաւ եփենք:

Այս անշունչ պառաւը գնաց, հոս ման եկաւ, հոն ման եկաւ, կէս բրինձ գտաւ ու երեք պղինձ, երկուքը ծակ, միւսն ալ յատակ չունի:

Ջուրը լեցուցինք այս անյատակ պղինձին մէջ, մէջը դրինք բաղն ու բրինձը ու անկրակ եփեցինք: Եփեցա՛ւ, եփեցա՛ւ, միսն ու բրինձը անհետացան, մնաց ջուրը:

Որսէն եկած անօթի մարդի՛կ... վրան ինկանք, կերա՛նք ու կերանք, ո՛չ աչքերնիս բան տեսաւ, ո՛չ բերաննիս բան մտաւ:

Բառեր եւ բացատրութիւններ

Կենդանի չէ- ողջ չէ

Գոմէշ- կովուն շատ նմանող, քիչ մը աւելի խոշորակազմ անասուն մը:

Պղինձ- այսինքն՝ պղինձէ կաթսայ:



### ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌԸ

Ա	Շ	Խ	Ա	Տ	Ա	Ս	Է	Ր	Ո
Գ	Ի	Տ	Ր	Ի	Ս	Ա	Թ	Գ	Ս
Ր	Հ	Ա	Պ	Ա	Գ	Ր	Ա	Կ	Ս
Ա	Ո	Ա	Զ	Ն	Ի	Ի	Ի	Յ	Ի
Ի	Թ	Ր	Ի	Կ	Ե	Ր	Ա	Բ	Ր
Ի	Ճ	Շ	Դ	Ա	Պ	Ա	Հ	Ի	Ո
Չ	Բ	Ա	Ր	Ե	Ս	Է	Ր	Չ	Ի
Ծ	Ա	Ռ	Ա	Յ	Ա	Ս	Է	Ր	Ն
Ս	Օ	Խ	Ա	Տ	Ր	Ա	Մ	Շ	Ճ

Յանցիկ մէջ ջնջել հետեւեալ ածականները, ապա մնացեալ տառերով կազմէ՛ պահուըտած բառը:

- ազնիւ
- աշխատասեր
- սիրուն
- բարեսեր
- ճշդապահ
- գթասիրտ
- կարգապահ
- բարեկիրթ
- ծառայասեր
- ճշմարտախօս
- գրաւիչ

### Կրնա՛ք 1000 ունենալ

Ձախ կողմի սիւնակին իւրաքանչիւր թիւը միացուցէ՛ք աջ կողմի սիւնակի այն թիւին, որոնց բազմապատկութեան արդիւնքը 1000-է:

1	125
20	500
4	100
8	200
2	1000
10	50
25	250
5	40

### Հանելուկ

- 1.- Այն ի՞նչ է, որ կրնայ ժպիտ բերել դէմքիդ, արցունք՝ աչքէ-րուդ, մտածում՝ միտքիդ, բայց բնաւ չի տեսնուիր:
- 2.- Եթէ վաղուան յաջորդող օրը Չորեքշաբթի է, ի՞նչ է երեկուան նախորդող օրը:

elmdmՉ - 2  
իմտոմՉվԵ - 1

մշղղոռվոռտոռ

# ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

## Յովհ. Թումանյան

Հօրս կնուսքին, մօրս ծնունդին, օր մը հինգ-վեց հոգիով, թուրով ու հրացանով միասին ելանք ու որսի գացինք: Հադին էր, Հիւդին էր, Շատին, Մատին էր, հայրս էր ու ես էի, որ այսպէս որսի գացինք...:

Սարեր ու ձորեր հանգիստ շրջեցանք ուր որս կար՝ սուսիկ-փուսիկ գացինք, ուր վախ կար՝ կուզէ-կուզ գացինք:

Գացի՛նք, գացի՛նք, շատ թէ քիչ, մէկ ալ տեսանք երեք լիճ. երկուքը՝ չոր, միւսին մէջ ալ կաթիլ մը ջուր չկայ: Մէկ ալ ի՛նչ տեսնենք, այս անջուր լիճին մէջ կը լողային ու կը ճչային երեք սպիտակ բադեր՝ երկուքը սատկած, միւսն ալ կենդանի չէ:

- Հադի՛, կրակէ՛...:

Հադին կ'ըսէ՝ «գէնք չունիմ»:

- Հիւդի՛, կրակէ՛...:

Հիւդին կ'ըսէ՝ «է՛ս ալ չունիմ»:

Չատի՛... Մատի՛...:

Կ'ըսեն՝ «մենք ալ չունինք»:

Հապա ի՛նչ ընենք...:

Հօրս ձեռքը կարճ ու երկար, հաստ ու բարակ փայտ մը կար, երեսին տարաւ, նշան առաւ, մէկ ալ փա՛թ կրակեց...: Ան կրակեց, ես զարկի, ու երբ զարկի, բազը այսպէս փռուեցաւ՝ ամեն մէկ թելը հինգ մէթր ու կէս:

- Հադի՛, դանակ...:

Հադին կ'ըսէ՝ «դանակ չունիմ»...:

-Հիւդի՛, դո՛ւն...:

Հիւդին կ'ըսէ՝ «է՛ս ալ չունիմ»...:

- Չատի՛, Մատի՛...:

Կ'ըսեն՝ «մենք ալ չունինք»:

Հապա ի՛նչ ընենք...:

Հայրս ուներ դանակ մը, սակայն ան ալ շեղբ չունէր:

Այս անշեղբ դանակը քաշեցինք: Հադին փորձեց մորթել՝ չկրցաւ, Հիւդին փորձեց՝ չկրցաւ, Չատին չկրցաւ, Մատին չկրցաւ, հայրս ալ չկրցաւ: Ե՛ս քաշեցի ու մորթեցի:



# ՀԱՇՈՒՄ՝ Օ-ԵՐԴ, - ԵՐԴ ՈՒ \*ԵՐԴ



## Ա.- Մեծ թիվով Օ ունիս:

Դուև բնաւ չես ձանձրանար: Առանձին մնալը քեզ չի վախցներ, եւ հզօր երեւակայութեանդ շնորհիւ՝ դուև գիտես ինքզինքդ գբաղեցնել:

### Աւելի երագելու համար

Արձակուրդներու նոթատետր մը պատրաստ մէջը արձանագրելու համար այցելած վայրերդ, կարդացած գիրքերդ, գբաղումներդ: Ասիկա երբ մեծնաս, շատ հաճելի յիշատակ մը պիտի ըլլայ քեզի համար:

Իսկ եթէ դուև շատ կը սիրես ընթերցանութիւնը եւ անդադար գիրք կը կարդաս, մտածէ նաեւ երբեմն ելլելու գիրքերու աշխարհէդ... յատկապէս երբ հիւրեր կ'ունենաս, այլապէս անքաղաքավարութիւն ըրած կ'ըլլաս:

## Բ.- Մեծ թիվով Պ ունիս

Կը սիրես խաղալ, շարժիլ եւ կ'ատես ձանձրանալ: Սակայն ձանձրանալն ալ երբեմն քեզի առիթ կու տայ շատ աղուոր գաղափարներ յղանալու:

### Խաղալու համար

Ձանձրանալը մեզի առիթ կու տայ ստեղծագործ ըլլալու եւ մեր երեւակայութիւնը աշխատցնելու, ասիկա շատ կարելու է: Երբ բան մը չունիս ընելու, խուսափէ անմիջապէս վիտեո խաղերուն դիմելէն:

Սկսէ՛ գրել պատմութիւն մը, դիտէ՛ ժապաւեն մը... գծագրութիւններ ըրէ՛ եւ պզտիկ ցուցահանդէս մը կազմակերպէ ծնողքիդ համար...

## Գ.- Մեծ թիվով \* ունիս:

Դուև միշտ չես գիտեր ի՛նչ ընել, սակայն գիտես յարմար անձերուն հարցնել: Ասիկա ալ մեծ յատկութիւն մըն է:

### Միասին ժամանակ անցընելու համար

Նայէ՛ եթէ շուրջդ կան քու տարիքիդ ուրիշ մանուկներ, ծովափը, գիւղը, այս ձեւով դուև կրնաս նոր ընկերներ շահիլ, անոնց հետ խաղալ եւ գբաղիլ:

Իսկ եթէ շուրջի անձերդ հանդարտութիւն եւ հանգիստ կը փնտռեն, յարգէ՛ անոնց փափաքը եւ անոնց առաջարկէ՛ միասին ժամանակ անցընել հանգիստէն ետք: Արձակուրդները բոլորին համար են:

